Հաշվետվություն

2017 թվականի նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը Բելգիայի Թագավորություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Մեխակ Ապրեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Բրյուսել, Բելգիայի Թագավորություն՝ 28 նոյեմբեր -2 դեկտեմբեր 2017 թվականի:

4. **Գործուղման նպատակը՝**

1. Մասնակցություն «Եվրոպայում զբոսաշրջության տնտեսական ազդեցության գնահատում. Զբոսաշրջության սատելիտային հաշիվ (TSA)» խորագրով սեմինար-քննարկմանը, որին հայկական կողմը մասնակցել է հետևյալ պատվիրակությամբ.

- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Մեխակ Ապրեսյան,
- ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Քրիստինե Պողոսյան,
- ՀՀ Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության պետ Գագիկ Աղաջանյան:

2. Մասնակցություն՝«Արևելքի և արևմուտքի խաչմերուկում հայ-բելգիական նոր հնարավորություններ» խորագրով գործարար ֆորումին:

5. Քննարկված թեմաները՝

1. «Եվրոպայում զբոսաշրջության տնտեսական ազդեցության գնահատում. Զբոսաշրջության սատելիտային հաշիվ (TSA)» խորագրով սեմինարին քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Սատելիտային հաշվի հայեցակարգային շրջանակներն ու նշանակությունը,
- Սատելիտային հաշվի դերն ու նշանակությունը զբոսաշրջության ոլորտում, տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցությունը,
- Սատելիտային հաշվի օգտագործումը զբոսաշրջության ոլորտում, սպասելիքները, առկա խոչընդոտներն ու հաղթահարման ուղիները,
- Եվրոպայում զբոսաշրջության սատելիտային հաշիվ համակարգի օգտագործման առկա վիճակն ու սպասելիքները,
- Սատելիտային հաշվի տվյալների օգտագործումը զբոսաշրջության ոլորտում,
- Սատելիտային հաշվի կառավարումը պետական մակարդակով,
- Սատելիտային հաշիվը՝ որպես զբոսաշրջության նշանակության մասին ըմբռնումը խթանող գործոն,
- Զբոսաշրջության պահանջարկի և առաջարկի չափանիշների, զբաղվածության, ներդրումների և կոլեկտիվ սպառման ցուցանիշների դուրսբերումը սատելիտային հաշվի օգնությամբ,
- Սատելիտային հաշիվը կիրառած և դեռևս չկիրառած երկրների փորձի փոխանակում: Մասնավորապես՝ Կանադայի, Ավստրիայի, Դանիայի, Պորտուգալիայի, Մալազիայի, Չեխիայի և Հունգարիայի կողմից ներկայացված փորձը:
- «Արևելքի և արևմուտքի խաչմերուկում հայ-բելգիական նոր հնարավորություններ» խորագրով գործարար ֆորումին քննարկվել է Հայ-բելգիական համագործակցության հնարավորությունները, ներկայացվել Հայաստանի տնտեսական և ներդրումային միջավայրը, զբոսաշրջության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտները:

6. Հանդիպումները՝

1. «Եվրոպայում զբոսաշրջության տնտեսական ազդեցության գնահատում. Զբոսաշրջության սատելիտային հաշիվ (TSA)» խորագրով սեմինարին հանդիպումներ են տեղի ունեցել՝

- ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային տնօրեն Իզաբել Գարանիայի
- ՄԱԿ ԶՀԿ Վիճակագրության, միտումների և քաղաքականության ծրագրի համակարգող Կլարա վան դեր Պոլի
- ՄԱԿ ԶՀԿ վիճակագրության և սատելիտային հաշվի կոմիտեի նախագահ Պիտեր Լայմերի
- Եվրոստատի զբոսաշրջության վիճակագրության ղեկավար Քրիստոֆ Դեմունթերի
- Եվրոպական հանձնաժողովի ներքին շուկայի, արդյունաբերության, ձեռնարկատիրության և փոքր ու միջին բիզնեսի գլխավոր տնօրինության զբոսաշրջության հարցերով պատասխանատու Օվիդյու Էնեի
- Վրաստանի Հանրապետության էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության Զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի հետազոտությունների և պլանավորման բաժնի պետ Գիորգի Բրեգաձեի,
- Զբոսաշրջության վիճակագրության Կանադայի, Ավստրիայի, Դանիայի, Պորտուգալիայի, Մալազիայի, Չեխիայի և այլ երկրների պատասխանատուների հետ:

2. «Արևելքի և արևմուտքի խաչմերուկում հայ-բելգիական նոր հնարավորություններ» խորագրով գործարար ֆորումին հանդիպումներ են տեղի ունեցել՝

- Հայ-բելգիական առևտրի պալատի պատվավոր նախագահ Բեռնարդ Կուլիի
- «Հայաստանի եվրոպացի բարեկամներ»-ը (EUFoA) միջազգային հասարակական կազմակերպության տնօրեն Դիոգո Պինտոյի
- Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան՝ Թաթուլ Մարգարյանի,
- Եվրամիությունում Հայաստանի առևտրական ներկայացուցիչ Վարոս Սիմոնյանի հետ:

Բրյուսելում գտնվելու ընթացքում Եվրամիությունում Հայաստանի առևտրական ներկայացուցիչ Վարոս Սիմոնյանը կազմակերպել է նաև հանդիպում Եվրոպայի ճանապարհորդության հանձնաժողովի (ETC) տնօրեն՝ Էդուարդո Սանտանդերի հետ:

7. Ելույթներն ու քննարկված թեմաները՝

«Արևելքի և արևմուտքի խաչմերուկում հայ-բելգիական նոր հնարավորություններ» խորագրով գործարար ֆորումի ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի

առաջին տեղակալ՝ Մեխակ Ապրեսյանը հանդես է եկել շնորհանդեսով՝ ներկայացնելով Հայաստանում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականությունը, ոլորտի ներկա վիճակն ու զարգացման ուղղությունները:

Ելույթներով և շնորհանդեսներով հանդես են եկել նաև՝

- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ներդրումների ներգրավման և համակարգման վարչության Վահագն Լալայանը՝ "Հայաստանի Հանրապետությունում ներդրումային միջավայրն ու ներդրումային քաղաքականությունը" թեմայով,
- Հայաստանի զարգացման հիմնադրամի ներդրումների գծով տնօրեն Ավետիս Հովհաննիսյանը՝ «Նոր հնարավորություններ արևելքի և արևմուտքի խաչմերուկում» թեմայով:
- "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի տնօրեն Բագրատ Ենգիբարյանը՝ «Թվայնացված տնտեսություն» թեմայով:
- Smartgates կազմակերպության բաժնետեր Աշոտ Արզումանյանը՝ «Թվայնացված տնտեսություն» թեմայով:
- Հայ-բելգիական առևտրի պալատի պատվավոր նախագահ Բեռնարդ Կուլին՝ ներկայացնելով Հայաստանը որպես գրավիչ զբոսաշրջային երկիր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

1. «Եվրոպայում զբոսաշրջության տնտեսական ազդեցության գնահատում. Զբոսաշրջության սատելիտային հաշիվ (TSA)» խորագրով սեմինարի շրջանակներում ՄԱԿ ԶՀԿ ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել միջոցներ ձեռնարկել հետևյալի ուղղությամբ.

- ՄԱԿ ԶՀԿ փորձագետների այց Հայաստան՝ զբոսաշրջության սատելիտային հաշիվ համակարգի ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքներն ու ստեղծված նախադրյալները, առկա խնդիրներն ու կարիքները տեղում գնահատելու և

համակարգի ներդրման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագիրն ու բյուջեն մշակելու նպատակով,

- Միջոցառումների ծրագիրն ու բյուջեն հավանության արժանանալուց հետո ՄԱԿ ԶՀԿ համապատասխան փորձագետի այց Հայաստան՝ Զբոսաշրջության սատելիտային հաշիվ համակարգի ներդրման և տեղական մասնագետների պատրաստման ու կարողությունների ձևավորման ու զարգացման նպատակով:

2. «Արևելքի և արևմուտքի խաչմերուկում հայ-բելգիական նոր հնարավորություններ» խորագրով գործարար ֆորումի շրջանակներում Դիոգո Պինտոյի հետ քննարկվել և նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել «Հայաստանի եվրոպացի բարեկամներ»-ը միջազգային հասարակական կազմակերպության աջակցությամբ զբոսաշրջության ոլորտում մասնագիտացված եվրոպական լրագրողների՝ Հայաստան ճանաչողական այցի կազմակերպման, ինչպես նաև հայկական զբոսաշրջային արդյունքը եվրոպական շուկայում ներկայացնելու և խթանելու այլ հնարավորությունների ուղղությամբ:

Էդուարդո Սանտանդերի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Եվրոպայի ճանապարհորդության հանձնաժողովի (ETC) հետ հետագա համագործակցության զարգացման ուղղությամբ, ինչպես նաև քննարկվել է այդ հեղինակավոր կառույցին Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի անդամակցության հնարավորությունները:

Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Մեխակ Ապրեսյան

Ստորագրությունը, ամսաթիվը՝

12.12.2017 թ.: